ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4438-Ա « 30 » հոկտեմբերի 2025 թ.

ՍԻԼԻԿՅԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Բենիկ Առուստամյանի լիազորված անձ Էդգար Գրիգորյանի դիմումը՝ Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցի հ.1/3 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2023 թվականի հունիսի 13-ի Հ-7367 և 2023 թվականի դեկտեմբերի 14-ի Հ-15965 արխիվային տեղեկանքները, հարևան հողօգտագործողների հայտարարությունները և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված գույքի առանձին որակական քանակական բնութագրերի և դրա նկատմամբ առանձին իրավունքների /սահմանափակումների/ վերաբերյալ հ.ԱՏ-22072025-01-1054 տեղեկանքը:

Հարցի ուսումնասիրությունից պարզվել է, որ Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցի հ.1/3 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը /համադրումները հանված/ կազմում է 596.80քմ, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2023 թվականի հունիսի 13-ի Հ-7367 և 2023 թվականի դեկտեմբերի 14-ի Հ-15965 արխիվային տեղեկանքներում ամրագրված՝ 680.0քմ մակերեսի փոխարեն:

Քննարկվող՝ 596.80քմ մակերեսով հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 9-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 12.08.2025թ. հ.Ն/46270-25 եզրակացությունը և Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 8-ի հ.28/135347-25 գրությունը.

1. Սահմանել, որ Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցի հ.1/3 հասցեում գտնվող հողամասի /տնամերձ/ սահմանները որոշվում են 596.80քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ